եւ մեծ քաղաք է եղել, որի բնակիչների մեծամասնութիւնը քրիստոնեաներ են եղել։ Այդ մասին մենք ունինք եւ մի աւելի հաստատուն պատմական փաստ։ Մեզ յայտնի է, որ 1330 թուին, Հռոմի Պապը, Սուլթանիյէ քաղաքի արքեպիսկոպոս նշանակեց Յովհաննէս Կոր անունով եկեղեցականին (Jean de Cor)։ Արքեպիսկոպոսական աթոռ հաստատելը մի քաղաքում՝ ցոյց է տալիս, որ քրիստոնեաների մեծ բազմութիւն պէտք է եղած լինէր այդտեղ. այդ քրիստոնեաները Հայ էին, որոնց մի մասը՝ երեւի Ընիտորների ջանքերով՝ ընդունեցին կաթուղիկէականութիւն [1]։

Երեւում է նոյնպէս, որ Հայեր եղել են նաեւ հռչակաւոր Ռէյ քաղաքում։ Ասիայի այդ ամենահռչակաւոր քաղաքի մասին, որի աւերակներն այսօր գտնւում են Թէհրանի մօտ, պատմագիրները հրաշալիք են պատմում։ Ինն երորդ դարում Ռէյ քաղաքն ունէր 96 թաղ, իւրաքանչիւր թաղ ունէր 46 փողոց, իւրաքանչիւր փողոց — 400 տուն եւ 10 մզկիթ. կար 6400 դպրոց, 16.600 բաղնիք, 15.000 աշտարակ, 12.000 ջրաղաց, 17.000 ջրանցք, 13.000 քարվանսարայ։ Մեծ շահավաճառ քաղաք էր, եւ կոչւում էր "Տիեզերքի վաճառատունը," ուստի եւ անկասկած է՝ որ այդտեղ Հայերի մեծ բազմութիւն պէտք է լինէր։ Ռէյը կործանուեց ԺԱ. եւ ԺԲ. դարում Թաթարներից։

---

1 Nouvelles Annales des Voyages par V. de S.-Martin. Paris 1852, Octobre.